Հաստատում եմ
«Մեհրաբյանի անվան բժշկական
քոլեջ» ՍՊԸ տնօրեն
_____Լ. Մեհրաբյան
«_____» _____20 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ տնօրենի ընտրության

1. Սույն կանոնակարգը սահմանում է ՛՛Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ՛՛ ՍՊԸ (այսուհետ ՄՈՒՀ) տնօրենի ընտրության գործընթացը:
2. Տնօրենի թեկնածուն ներկայացվում և հաստատվում է ընկերության հիմնադիրների ընդհանուր ժողովի կողմից: Նա իրականացնում է ընկերության ընթացիկ ղեկավարումը, հաշվետու է հիմնադիրների ընդհանուր ժողովին և կազմակերպում է վերջինիս որոշումների իրականացումը: Ընկերության հիմնադիրների ընդհանուր ժողովը վաղաժամկետ դադարեցնում է տնօրենի լիազորությունները և այն փոխանցում նոր ընտրված տնօրենին:
3. Քննարկումը կատարվում է ընկերության հիմնադիրների ընդհանուր ժողովի նիստում: Քննարկման ընթացքում հաշվի են առնվում թեկնածուի գիտելիքները, կազմակերպչական հմտությունները, կոլեկտիվում աշխատելու ունակությունները, ինչպես նաև աշխատանքային ստաժը, գիտական կոչումը և աստիճանը: Հավասար պայմաններում հաշվի են առնվում նաև գիտական հոդվածների, ուսումնա-մեթոդական ձեռնարկների և մենագրությունների հրատարակումները:
4. Թեկնածուն ընտրվում է հիմնադիրների ժողովի ձայների պարզ մեծամասնությամբ: Բաց քվեարկությամբ ընտրված տնօրենի թեկնածուն հաստատվում է հիմնադիրների ժողովի նախագահի կողմից:
5. Քոլեջի փոխտնօրենը (ուսումնական մասի վարիչը), քվեարկության արդյունքների հիման վրա, նախապատրաստում է համապատասխան հրամանի և պայմանագրի նախագիծ:
6. Հրամանը հիմք է հանդիսանում ընտրված թեկնածուի նշանակման համար:
7. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում տնօրենի հաստատման պահից:

՛՛Մեհրաբյանի անվան բժշկական
քոլեջ՛՛ ՍՊԸ փոխտնօրեն՝ /Հ.Ա. Բաբայան/